

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2005 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 1-Ի N 946-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

18 հոկտեմբերի 2012 թ.  
N 1359-Ն

«Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հունիսի 1-ի «Հսկիչ-դրամարկղային մեքենաներին և դրանց շահագործման համար օգտագործվող ժապավեններին ներկայացվող պահանջները հաստատելու մասին» N 946-Ն որոշման հավելվածում կատարել հետևյալ լրացումները՝

1) 4-րդ կետում՝

ա. «ա» ենթակետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր մասով.

«2013 թ. հունվարի 1-ից ամսական ավելացված արժեքի հարկ վճարողների կողմից կիրառվող ՀՂՄ-ն պետք է լրացուցիչ ունենա՝

չջնջվող հիշող սարք՝ նվազագույնը 128 ՄԲ ծավալով,

256 MB. օպերատիվ հիշողություն, 256 MB. հիմնական հիշողություն և մինչև 32 GB. լրացուցիչ հիշողության քարտ տեղադրելու հնարավորություն,

SIM քարտի միջոցով 3G և GPRS կապուղիներով, Ethernet պորտի միջոցով մալուխային կապուղիներով համացանցի միջոցով վերադաս հարկային մարմնի տեղեկատվական համակարգին միանալու հնարավորություն,

SAM քարտով կոդավորման հնարավորություն,

PCI EMV 1 և 2 կարգի համապատասխանության սերտիֆիկատ,

ծրագրային ապահովման փոփոխության և նոր մոդուլների ինտեգրման հնարավորություն:»,

բ. «բ» ենթակետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր մասով.

«2013 թ. հունվարի 1-ից ամսական ավելացված արժեքի հարկ վճարողների կողմից կիրառվող ՀՂՄ-ն պետք է լրացուցիչ ապահովվի՝

վերադաս հարկային մարմնի կողմից հաստատված հատուկ ձևաչափով (արձանագրությամբ) տեղեկատվական համակարգի հետ աշխատանք,

վերադաս հարկային մարմնի կողմից տրամադրված ալգորիթմով վիճակահանությանը մասնակցող թվերի գեներացումը,

բանկային պլաստիկ քարտերի (չիպային և մագնիսական) միջոցով դրամական հաշվարկների իրականացում,

համապատասխան պարբերականությամբ կապի հաստատումը հարկային մարմնի տեղեկատվական համակարգի հետ՝ տվյալների փոխանակման նպատակով (կտրոնների տվյալների ուղարկում և նոր տվյալների ստացում ՊԵԿ-ի միասնական շտեմարանից),

հարկային մարմնի տեղեկատվական համակարգի հետ համապատասխան տվյալների (ամսաթիվը, ժամը և այլն) ներդաշնակեցումը (համապատասխանեցումը),

տվյալ և հաջորդ ամիսների վիճակահանության շահող թվերը վերադաս հարկային մարմնի տեղեկատվական համակարգից ստանալու և պահպանելու հնարավորություն՝ հետագայում դրանք ՀՂՄ կտրոնի վրա արտատպելու նպատակով,

ՀՂՄ կտրոնների հերթական համարների թվային միջակայքը (առաջին և վերջին թվերը) ստանալու և պահպանելու հնարավորություն՝ այն հետագայում ՀՂՄ կտրոնի վրա արտատպելու նպատակով,

հնարավորություն SAM քարտի միջոցով կոդավորել տվյալները RSA ստանդարտին համապատասխան և պահպանել այն հատուկ չջնջվող հիշող սարքի մեջ (նվազագույնը 128 ՄԲ):»,

գ. լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությամբ.

«Ցանցային հսկիչ-դրամարկղային մեքենաների միջոցով փոխանցվող տվյալները և դրանց փոխանցման ձևաչափը սահմանում է վերադաս հարկային մարմինը:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հայաստանի Հանրապետության  
վարչապետ

Տ. Սարգսյան

2 նոյեմբերի 2012 թ.  
Երևան